## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 03 >> Մայիսի 2013թ. N 28 - Ա

ք. Արմավիր

### ԾԱՂԿԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի N 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնի անձնագիրը՝

**կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ (ծածկագիր՝ 63-2.1-4) Ծաղկանուշ Գրիգորյանին 2013 թվականի մայիսի 6-ից մայիսի 18-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 26-ի N 965-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով <<Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի>> կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացներին:
2. Ծաղկանուշ Գրիգորյանի վերապատրաստման մեջ գտնվելու ժամանակահատվածում վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ Աշխեն Պողոսյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով կատարել գործուղման ծախսերի վճարում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2013 թվականի մայիսի 6-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ